



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. հունիսին /վերլուծություն/

2008թ. հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14437 գործարքներ, որոնց քանակը 2007թ. հունիսի համեմատ աճել է 10.8%-ով, իսկ 2008թ. մայիսի համեմատ՝ 9.5%-ով:

2008թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4906 օտարման գործարքների 83.6% կազմել են առուվաճառքները, 15.5%՝ նվիրատվությունները և 0.9%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 33.3%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 31.8% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2008թ. հունիսին, մայիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 3.0%-ով, իսկ 2007թ. հունիսի համեմատ նվազել՝ 0.3%-ով:

2008թ. հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 59.3% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2008թ. մայիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 11.1%-ով, իսկ 2007թ. հունիսի համեմատ նվազել՝ 16.9%-ով:

2008թ. հունիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հունիս 2007թ.	հունիս 2008թ.	մայիս 2008թ.
Կենտրոն	454800	487000	477400
Արաբկիր	372500	418500	416300
Քանաքեռ-Զեյթուն	273000	309600	307300
Նոր-Նորք	228700	281700	276200
Ավան	217000	274000	268300
Էրեբունի	221700	279500	274000
Շենգավիթ	244000	285000	279300
Դավթաշեն	246200	295000	290200
Աջափնյակ	237000	280800	280300
Մալաթիա-Սեբաստիա	226700	269700	266000
Նուբարաշեն	124900	155300	151500
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	258800	303300	298800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. հունիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. մայիսի համեմատ աճել են 1.5 %-ով:

2008թ. հունիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 423 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. մայիսի համեմատ նվազել է 4.1%-ով, իսկ 2007թ. հունիսի համեմատ՝ 13.1%-ով:

2008թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2007թ.	հունիս 2008թ.	մայիս 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	106900	133100	127000

	Ապարան	28600	33700	33100
	Թալին	36100	43500	43300
Արարատ	Արտաշատ	85400	98700	94500
	Մասիս	92600	131600	130000
	Վեդի	58100	79600	79500
	Արարատ	56900	59900	59700
Արմավիր	Վաղարշապատ	126300	166200	165800
	Արմավիր	89800	119100	117900
	Մեծամոր	58400	81300	78500
Գեղարքունիք	Սևան	60900	93700	89500
	Գավառ	34500	47800	45800
	Մարտունի	50300	68600	68400
	Վարդենիս	26300	31700	31500
	Ճամբարակ	14700	16100	16000
Լոռի	Վանաձոր	71200	94000	89700
	Ստեփանավան	34300	46000	45800
	Մայիսակ	44800	62300	60800
	Ալավերդի	24900	31300	29900
	Տաշիր	24500	31500	30600
	Թումանյան	5400	5600	5600
	Շամլուղ	3000	3200	3200
	Ախթալա	11600	12900	12900
Կոտայք	Աբովյան	145700	175700	175300
	Նոր Հաճն	99500	126600	121500
	Բյուրեղավան	73300	104500	100000
	Եղվարդ	89700	122000	116500
	Հրազդան	49600	70000	67500
	Ծաղկաձոր	94000	150000	142900
	Զարենցավան	60900	94100	90300
Շիրակ	Գյումրի	68800	100100	96200
	Արթիկ	44800	55100	53700
	Մարալիկ	25700	26800	26500
Սյունիք	Գորիս	72900	108700	104400
	Կապան	65400	87300	86700
	Սիսիան	50600	73800	71100
	Մեղրի	36900	46400	46300
	Ագարակ	23900	29100	29000
	Քաջարան	31000	49000	47500
	Դաստակերտ	6800	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	58100	75600	75400
	Եղեգնաձոր	73400	97900	95400
	Զերմուկ	102800	124300	123800
Տավուշ	Դիլիջան	66300	92900	89100
	Իջևան	89500	120300	115700
	Բերդ	33000	39500	38200
	Նոյեմբերյան	27800	30000	29900
	Այրում	18000	21100	21100

2008թ. հունիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. մայիսի համեմատ աճել են 2.6%-ով:

2008թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 542 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 102, մյուս մարզերում միասին վերցրած՝ 440: 2008թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի

տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է՝ 8.4%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 12.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 14.9%-ով: 2007թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 11.1%-ով, ընդ որում Երևանում՝ 9.7%-ով, իսկ մյուս մարզերում՝ 11.4%-ով:

2008թ. հունիսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հունիս 2007թ.	հունիս 2008թ.	մայիս 2008թ.
Կենտրոն	468900	494400	491300
Արաբկիր	376500	426900	420700
Քանաքեռ Զեյթուն	275200	316800	315000
Նորք Մարաշ	233000	288900	283400
Ավան	219800	276100	274500
Էրեբունի	225300	281600	276600
Շենգավիթ	245200	287200	282200
Դավթաշեն	250800	301200	295400
Աջափնյակ	241700	289000	286000
Մալաթիա Սեբաստիա	228900	275900	273500
Նուբարաշեն	127400	159900	158300
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	263000	308900	305200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. հունիսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. մայիսի համեմատ աճել են 1.2 %-ով:

2008թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2007թ.	հունիս 2008թ.	մայիս 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	109100	135500	129500
	Ապարան	33200	36700	35900
	Թալին	39500	46700	45700
Արարատ	Արտաշատ	88300	101900	100600
	Մասիս	95500	134500	131500
	Վեդի	62400	90100	87600
	Արարատ	60300	65700	65400
Արմավիր	Վաղարշապատ	130200	172500	168500

	Արմավիր	92100	123500	122200
Գեղարքունիք	Սևան	63100	95800	91400
	Գավառ	38100	49400	47600
	Մարտունի	53600	73600	72000
	Վարդենիս	30300	33800	33200
	Ճամբարակ	17600	20300	20000
Լոռի	Վանաձոր	76100	97000	93200
	Ստեփանավան	38100	51800	51500
	Սպիտակ	49300	66500	66100
	Ալավերդի	29500	33400	32300
	Տաշիր	27500	34700	34400
	Թումանյան	8300	9900	9900
	Շամլուղ	5600	6600	6400
	Ախթալա	14400	15800	15800
Կոտայք	Աբովյան	149100	184400	179200
	Նոր Հաճն	104400	131900	125900
	Բյուրեղավան	75400	106800	101700
	Եղվարդ	93300	124300	119000
	Հրազդան	53500	71800	69300
	Ծաղկաձոր	127000	237800	227500
	Չարենցավան	62900	95900	91900
Շիրակ	Գյումրի	74000	101400	98400
	Արթիկ	46400	58300	57600
	Սարալիկ	27900	31400	31000
Սյունիք	Գորիս	74700	110700	107400
	Կապան	67500	91900	91100
	Սիսիան	55700	74700	73000
	Մեղրի	40100	49600	49400
	Ագարակ	26800	32300	32100
	Դաստակերտ	9600	10400	10200
Վայոց Ձոր	Վայք	60100	80200	78500
	Եղեգնաձոր	75200	103000	101000
	Ջերմուկ	53200	81500	78500
Տավուշ	Դիլիջան	69500	98800	94000
	Իջևան	90700	125700	123700
	Բերդ	36500	40900	40500
	Նոյեմբերյան	31200	35400	35300
	Այրում	19200	22800	22800

2008թ. հունիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. մայիսի համեմատ աճել են 2.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. հունիսին հանրապետությունում օտարվել են 2020 միավոր /1422.52 հա/ հողեր, որից Երևանում՝ 133 միավոր /14.09 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 65 միավոր /12.85 հա/ հողեր, որից Երևանում՝ 40 միավոր /6.96 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 857 միավոր /1308.53 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.14 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 719 միավոր /70.00 հա/, որից Երևանում՝ 89 միավոր /7.30 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 394 միավոր /29.51 հա/, որից Երևանում՝ 39 միավոր /6.54 հա/,

- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 29 միավոր /9.97 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.12 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 19 միավոր /4.25 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 2 միավոր /0.25 հա/

2008թ. հունիսին հանրապետությունում օտարված հողերից 1883 միավորի /1388.04 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 119 միավոր /12.30 հա/, նվիրատվության գործարքներ՝ 123 միավորի /33.38 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /1.69 հա/ և փոխանակության գործարքներ՝ 14 միավորի /1.10 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.10 հա/:

Հանրապետությունում 2008թ. հունիսին, 2007թ. հունիսի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 2.6%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել՝ 5.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 16.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 481.52 հա, որից 471.87 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 39.8% կամ 750 գործարքներ /624.14 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 40 գործարքներ /3.75 հա/, իսկ 59.7% կամ 1124 միավորը /746.92 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 79 միավոր /8.55 հա/: 2008թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 9 գործարք /16.98 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2008թ. հունիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՄՎԱՆՈՒԹՄԱՆ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	1	0.02	21	1.71	18	2.01	3	0.14	1	0.09	57	3.88	18	4.45
Արագածոտն	64	311.78	0	0.00	10	1.43	50	3.44	70	58.37	0	0.00	72	5.93	1	0.01
Արարատ	27	46.59	4	1.76	59	10.75	41	1.78	86	28.67	0	0.00	65	5.91	6	0.29
Արմավիր	19	46.92	5	2.57	2	0.05	29	0.54	99	424.95	0	0.00	62	5.72	19	0.77
Գեղարքունիք	10	25.83	3	1.06	30	3.56	23	1.35	91	42.56	0	0.00	8	0.95	2	0.70
Լոռի	7	9.15	1	0.93	15	0.78	30	0.30	10	6.83	0	0.00	9	1.20	3	0.02
Կոտայք	50	113.81	4	0.95	14	1.01	34	1.74	150	70.04	0	0.00	156	15.39	13	5.77
Շիրակ	1	1.00	0	0.00	24	1.24	31	1.28	12	18.69	0	0.00	10	0.63	2	0.09

Մյունիք	2	2.00	0	0.00	3	0.30	4	0.67	23	23.58	1	0.01	5	0.35	8	0.11
Վայոց Ձոր	18	9.10	2	0.40	0	0.00	30	0.42	6	6.01	0	0.00	4	0.61	2	0.03
Տավուշ	11	8.09	7	2.19	21	1.49	22	3.39	30	11.70	0	0.00	6	0.47	0	0.00
Ընդամենը	209	574.27	27	9.88	199	22.32	312	16.92	580	691.54	2	0.10	454	41.04	74	12.24

Ստորև ներկայացվում է 2008թ. հունիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	30	2.59	1	0.02	11	0.56	18	2.01	10	1.15	0	0.00	0	0.00	10	1.15	0	0.00
Արագածոտն	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	122	316.65	64	311.78	0	0.00	10	1.43	48	3.44
Արարատ	7	0.60	2	0.52	1	0.04	4	0.04	124	60.28	27	46.59	2	1.24	58	10.71	37	1.74
Արմավիր	15	0.09	2	0.03	1	0.002	12	0.06	40	49.99	19	46.92	3	2.54	1	0.05	17	0.48
Գեղարքունիք	4	0.39	1	0.36	0	0.00	3	0.03	62	31.41	10	25.83	2	0.70	30	3.56	20	1.32
Լոռի	5	0.94	1	0.93	0	0.00	4	0.01	48	10.22	7	9.15	0	0.00	15	0.78	26	0.29
Կոտայք	12	0.52	3	0.30	1	0.03	8	0.19	83	114.71	43	111.54	1	0.65	13	0.97	26	1.55
Շիրակ	9	0.30	0	0.00	3	0.13	6	0.17	47	3.22	1	1.00	0	0.00	21	1.11	25	1.11
Մյունիք	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	8	2.96	2	2.00	0	0.00	3	0.30	3	0.66
Վայոց Ձոր	4	0.404	2	0.40	0	0.00	2	0.004	46	9.52	18	9.10	0	0.00	0	0.00	28	0.42
Տավուշ	4	0.24	0	0.00	3	0.15	1	0.09	57	14.91	11	8.09	7	2.19	18	1.34	21	3.29
Ընդամենը	93	6.09	12	2.56	20	0.91	61	2.62	647	615.02	202	572.00	15	7.32	179	21.40	251	14.30

Հանրապետությունում 2008թ. հունիսին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 7 գործարք /2.27 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. հունիսին 2007թ. հունիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 11.9%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 2.0 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 11.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 9.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 18.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել՝ 30.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 15.4%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. հունիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների			
	Միավորների քանակ	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	57	305.52	34.4	768.2	140.0	47	20.52	365.0	12000.0	3310.5
Ապարան	1	0.06	3573.3	3573.3	3573.3	3	6.76	86.5	2727.3	432.2
Թալին	6	6.21	36.5	625.6	262.5	17	27.35	93.6	5494.5	460.8
Ծաղկահովիտ						3	3.74	79.5	1000.0	195.0
Արարատի մարզ										
Արտաշատ	9	24.79	57.4	2306.7	1336.8	47	11.73	335.1	10833.3	1751.5
Մասիս	10	12.53	67.1	2310.0	1729.0	21	6.16	200.0	11904.8	2200.0
Վեդի	8	9.27	80.0	216.0	127.1	18	10.77	207.0	10795.1	1524.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	11	43.43	31.4	3181.8	662.1	20	13.89	294.3	9090.0	1110.2
Բաղրամյան	3	0.40	36.1	39.4	37.2	20	311.57	90.6	2561.1	650.4
Վաղարշապատ	5	3.09	31.6	31.6	31.6	57	98.85	444.4	11764.7	1995.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						52	13.81	199.8	1875.0	415.8
Ճամբարակ	5	11.20	99.3	3475.7	1019.1	18	8.01	60.5	953.3	178.8
Մարտունի						3	1.00	51.1	2850.0	505.4
Սևան	1	7.00	1221.0	1221.0	1221.0			52.2	2134.8	210.1
Վարդենիս	4	7.63	66.0	552.8	336.6	18	19.73	41.2	2575.1	293.2
Լոռու մարզ										
Այվերդի	1	6.88	225.0	225.0	225.0	2	0.29	170.4	6424.2	1142.8
Գուգարք	3	0.27	112.4	700.0	397.0	2	2.47	234.6	6065.9	984.8
Սպիտակ	3	2.00	229.0	231.6	230.7			250.0	5555.5	541.1
Ստեփանավան						5	2.35	90.6	1686.6	398.2
Տաշիր						1	1.73	45.3	1384.4	218.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	34	94.30	67.5	1642.9	474.8	74	21.33	279.3	11942.7	3998.8
Եղվարդ	4	13.34	38.8	111.4	70.1	62	41.17	174.4	11971.8	2794.2
Հրազդան	5	3.90	73.8	932.5	524.3	13	7.08	130.5	10256.4	1142.5
Շիրակի մարզ										
Ախուրյան						3	2.78	252.0	1693.1	480.3
Ամասիա								40.9	261.0	120.0
Անի						7	10.91	110.6	546.9	275.7
Աշոցք	1	1.00	304.0	304.0	304.0	2	5.00	58.5	215.8	120.3
Արթիկ								79.4	1428.6	186.5
Սյունիքի մարզ										
Գորիս						11	18.60	92.6	1023.2	385.5
Կապան								120.0	841.6	248.8
Մեղրի						8	0.91	193.0	3000.0	534.1
Սիսիան	2	2.00	451.5	687.5	569.5	3	4.07	46.3	1977.4	270.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	18	9.10	33.3	1966.5	665.1	2	1.29	125.0	10000.0	1354.5
Վայք						4	4.71	58.8	1430.7	526.2
Տավուշի մարզ										
Բերդ						5	1.63	213.3	3783.8	395.8
Իջևան	10	7.69	45.8	9200.0	3147.5	7	3.75	267.5	9454.5	868.5
Նոյեմբերյան	1	0.40	724.9	724.9	724.9	18	6.33	46.7	7368.4	598.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. հունիսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	6325.0	172.2	174.1	173.3	67	51243.0	130.7	22200.0	2568.4
Ապարան	3	3200.0	125.0	127.0	126.3	3	2550.0	124.1	609.6	214.1
Թալին						1	2670.0	63.2	1454.8	108.0
Ծաղկահովիտ	4	4800.0	70.8	70.8	70.8	1	2870.0	60.0	214.3	73.2
Արարատի մարզ										
Արտաշատ	46	48498.5	332.8	422.8	381.5	22	17585.0	173.9	7140.3	925.8
Մալիս	12	58630.0	266.7	1817.2	956.6	31	29830.0	187.5	25000.0	1210.8
Վեդի						12	11690.0	126.1	5000.0	678.2
Արմավիրի մարզ										
Արմավիր						14	16112.0	131.6	9090.9	1215.2
Բաղրամյան								100.0	833.3	144.2
Վաղարշապատ	1	512.0	3828.0	3828.0	3828.0	48	41121.0	197.4	26528.4	1545.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								186.6	1084.3	383.3
Ճամբարակ								71.3	2286.2	105.1
Մարտունի	5	3634.0	112.6	118.7	114.3	6	6770.0	119.3	5000.0	272.2
Սևան	6	7501.0	188.1	540.9	331.8	1	1200.0	240.0	3110.4	173.8
Վարդենիս	19	24447.0	378.4	378.4	378.4	1	1563.0	72.5	987.2	127.1
Լոռու մարզ										
Ալավերդի						2	1900.0	114.3	1388.9	144.7
Գուգարք	14	7130.0	52.7	3381.0	1751.3	3	2603.0	77.9	14083.3	594.5
Սյիտակ						2	2670.0	104.9	1348.3	142.2
Ստեփանավան	1	671.0	263.9	263.9	263.9	2	4790.0	88.2	1666.7	115.3
Տաշիր								45.3	400.0	70.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	9	6520.0	757.4	2345.0	1912.3	70	67137.0	264.5	35353.5	2038.5
Եղվարդ	2	1600.0	1617.5	1617.5	1617.5	68	68240.8	173.6	27000.0	2178.4
Հրազդան	2	1600.0	251.3	268.0	259.7	18	18479.0	117.7	34848.5	1346.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	19	9966.0	290.6	116666.7	8146.4	8	3964.0	113.6	18750.0	332.8
Ամասիա								45.3	274.7	70.1
Անի								67.9	180.6	99.5
Աշոցք								40.8	144.0	58.1
Արթիկ	2	1150.0	291.4	426.0	358.7	2	2300.0	111.8	5000.0	186.7
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	252.1
Կապան	3	3000.0	115.0	115.5	115.2	1	600.0	67.9	2638.9	210.1
Մեղրի						1	600.0	68.5	632.9	132.2
Սիսիան						1	869.0	123.5	875.0	150.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	4916.0	96.7	7659.6	321.5

Վայր						1	1200.0	120.7	1448.3	122.3
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	88.8
Իջևան	18	13361.0	80.1	2300.0	1355.9	5	4354.0	74.1	14423.1	455.3
Նոյեմբերյան						1	330.0	125.0	1948.1	144.6

2008թ. հունիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարքներ 2.21 հա մակերեսով, ընդ որում 1-ական՝ /0.08 հա/ Երևանում և /2.13 հա/ Շիրակի մարզում:

2008թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1041 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.2%: Ընդ որում, վարձակալության գործարքների 45.3% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. հունիսին 2008թ. մայիսի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 4.7%-ով, իսկ 2007թ. հունիսի համեմատ՝ 7.8%-ով:

2008թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 68 բնակարանների, 33 անհատական բնակելի տների, 371 հասարակական, 47 արտադրական նշանակության օբյեկտների, 508 միավոր /5246.89 հա/ հողերի, 13 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. հունիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 20 վարձակալության գործարքների /այդ թվում 4 միավոր /0.01 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2008թ. մայիսի համեմատ նվազել է 47.4%-ով, իսկ 2007թ. հունիսի համեմատ աճել՝ 25.0%-ով:

2008թ. հունիսին հանրապետությունում վարձակալված 5246.89 հա հողերից 6.57 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 5240.32 հա հողերի 18.31 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.33 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 2305.37 հա, որից 2295.85 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 3558.04 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. հունիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	6	460.94	17	38.94
Արարատ	4	2095.00	4	200.85
Արմավիր	0	0.00	25	25.73
Գեղարքունիք	1	2.00	35	165.14
Լոռի	0	0.00	37	98.04
Կոտայք	7	724.00	6	254.55
Շիրակ	1	60.00	64	114.40
Սյունիք	3	216.10	41	658.21
Վայոց Ձոր	0	0.00	22	20.59
Տավուշ	0	0.00	10	10.45
Ընդամենը	22	3558.04	261	1586.90

2008թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2876 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 19.9%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. մայիսի համեմատ աճել է 17.0%-ով, իսկ 2007թ. հունիսի համեմատ՝ 30.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.9%/, առանձնատների /27.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.2%/ և հողերի /12.5%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1122 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. մայիսի համեմատ աճել է 11.9%-ով, իսկ 2007թ. հունիսի համեմատ աճել՝ 26.2%-ով:

2008թ. հունիսին հանրապետությունում գրավադրվել են 1843.14 հա հողեր, որից 13.84 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 98.9%-ը կամ 1823.46 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.19 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 1437.07 հա, որից 1436.34 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. հունիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 343 գործարքներ, որից 226-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 67.3%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակականների, 21.3%-ն՝ անհատական բնակելի տների, 5.0%-ն՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.6%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 2.3%-ը՝ ամառանոցների, 0.6%-ն՝ ավտոտնակների և 2.9%-ը հողերի նկատմամբ: 2008թ. մայիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 30.4 %-ով, ընդ որում Երևանում՝ 37.0%-ով, իսկ մարզերում՝ 19.4%-ով:

2008թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 7 և 1 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: Մասնավորեցման գործարքների քանակը 2008թ. մայիսի համեմատ աճել է՝ 14.3%-ով, իսկ 2007թ. հունիսի համեմատ նվազել՝ 46.7%-ով: 2008թ. հունիսին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 3-ը՝ Երևանում, 2-ը՝ Արարատի մարզում, 1-ական՝ Արագածոտնի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում:

2008թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2413 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. մայիսի համեմատ աճել է 7.7%-ով, իսկ 2007թ. հունիսի համեմատ՝ 6.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.2%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն